ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 45

«10» 06 2022թ.

ք. Երևան

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (ԵՐՐՈՐԴ ՔՆՆԱՇՐՋԱՆ) ԳՆԱՀԱՏԵԼՈՒ, ԻՍԿ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով դատախազների թեկնածությունների 2022թթ. ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրով նախատեսված՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսերի արդյունքները գնահատելու, իսկ արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար, համապատասխանաբար՝ գնահատման և բողոքարկման հանձնաժողովներ ձևավորելու անհրաժեշտությունից, հիմք ընդունելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Դատախազների թեկնածությունների 2022 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսերի արդյունքները (երրորդ քննաշրջան) գնահատելու համար ձևավորել գնահատման հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

Արթուր Չախոյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ,

Աբգար Առաքելյան – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի պաշտոնակատար,

Միեր Մկրտչյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ,

Կարեն Ամիրյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ,

Շուշանիկ Իսրայելյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ:

2. Դատախազների թեկնածուների 2022 թվականների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման քննության արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորել բողոքարկման հանձնաժողով հետևյալ կազմով՝

Արմեն Աֆանդյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ,

Արտակ Հարությունյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Արդարադատության ակադեմիայի ռեկտորին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ՝ **Գ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**